ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետև՝ օրենք) 21-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ «5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը սույն օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է ստացել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կատարել է ուսումն ավարտելուց հետո առնվազն երեք տարի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ոլորտում Հայաստանի Հանրապետությունում աշխատելու պայմանը:»:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ մասով հետևյալ բովանդակությամբ «8. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com/# կայքի՝ Academic Ranking of World Universities ցանկի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված)՝ կամ մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորելու համար, ինչպես նաև ուսումն ավարտելուց հետո առնվազն երեք տարի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ոլորտում Հայաստանի Հանրապետությունում աշխատելու համար: Տարկետում տրամադրելու պայմանները և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում: Սույն օրենքի կարգավորումները տարածվում է նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետով սահմանված նվաճումների հիման վրա պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած (այդ թվում սույն օրենքի ընդունման պահին ուսումնառության մեջ գտնվող) և համապատասխան կրթական ծրագրով ուսումը ավարտած բոլոր քաղաքացիների վրա:

Կ-1200-01.12.2025-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ~~ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետև՝ օրենք) 21-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ «5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը սույն օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է ստացել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կատարել է ուսումն ավարտելուց հետո առնվազն երեք տարի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ոլորտում Հայաստանի Հանրապետությունում աշխատելու պայմանը:»:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ մասով հետևյալ բովանդակությամբ «8. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com/# կայքի՝ Academic Ranking of World Universities ցանկի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված)՝ կամ մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորելու ~~և~~համար, ինչպես նաև ուսումն ավարտելուց հետո առնվազն երեք տարի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ոլորտում Հայաստանի Հանրապետությունում աշխատելու համար: ~~Նշված ցանկի հաստատություններում բակալավրի կամ~~

մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորելուց և ուսումն ավարտելուց հետո առնվազն երեք տարի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ոլորտում Հայաստանի Հանրապետությունում աշխատելուց հետո քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից: Տարկետում տրամադրելու պայմանները և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 32. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով ով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում: Սույն օրենքի կարգավորումները տարածվում է նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետով սահմանված նվաճումների հիման վրա պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած (այդ թվում սույն օրենքի ընդունման պահին ուսումնառության մեջ գտնվող) և համապատասխան կրթական ծրագրով ուսումը ավարտած բոլոր քաղաքացիների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Կ-1200-01.12.2025-ԳԿ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	Կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ» ձևակերպումն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծով կատարվում են միայն լրացումներ, իսկ «ԼՐԱՑՈՒՄ» բառի փոխարեն լրացնել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառը: Սույն առաջարկությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթից, որի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը: Հաշվի առնելով վերոգրյալը նախագծի վերնագիրը խմբագրվել է հետևյալ խմբագրությամբ՝ **«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ**	Ընդունվել է	Ընդունվել է

			ՋԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»		
2.	Կառավարություն	Լրացվող նոր 1-ին հոդված	Նախագծով՝ գործող օրենքի 22-րդ հոդվածում նախատեսվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման նոր հիմք, որը միաժամանակ հիմք է նաև զինվորական ծառայությունից ազատման համար: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենքի 21-րդ հոդվածով սահմանվում են պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքերը, իսկ 22-րդ հոդվածով սահմանված են պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերը, առաջարկում ենք պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կարգավորումները՝ Օրենքում և իրավակիրառ պրակտիկայում ներքին հակասություններից խուսափելու նպատակով, սահմանել Օրենքի 21-րդ հոդվածում: Հաշվի առնելով վերոգրյալը նախագիծը լրացվել է նոր 1-ին հոդվածով հետևյալ բովանդակությամբ, որով լրացում է կատարվում Օրենքի 21-րդ հոդվածում: «Հոդված 1. Զինվորական ծառայության և զինծառայողի	Ընդունվել է	Ընդունվել է

			կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետև՝ օրենք) 21-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ «5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը սույն օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է ստացել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կատարել է ուսումն ավարտելուց հետո առնվազն երեք տարի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ոլորտում Հայաստանի Հանրապետությունում աշխատելու պայմանը:»:» Ըստ այդմ հոդվածների համարակալումը վերանայվել է:		
3.	Կառավարություն	1-ին (լրամշակված 2-րդ) հոդված	1. Առաջարկվող կարգավորումներով նախատեսվում է, որ նոր ներդրվող՝ աշխատելու համար տարկետում տրամադրելու և դրանից հետո	Ընդունվել է	Ընդունվել է

			զինվորական ծառայությունից ազատվելու համակարգից կարող են օգտվել մինչ այս պահը Շանհայ վարկանիշավորման ցանկի 50 համալսարաններում սովորելու հիմքով տարկետում ստացած քաղաքացիները ևս, սակայն տարկետում տրամադրելու համար սովորելու և աշխատելու պայմանը «և» շաղկապով բաժանելու դեպքում ստացվում է, որ նշված քաղաքացիները մինչև նոր տարկետում չստանան միարժամանակյա պայմանի առկայությամբ չեն կարող նշված հիմքով տարկետման և ազատման համակարգից օգտվել, հետևաբար նախագծի 1-ին՝ (լրամշակված 2-րդ) հոդվածում «և» շաղկապը «ինչպես նաև» շաղկապով փոխարինելը կարգավորում է նշված խնդիրը և արդեն իսկ սովորելու համար տարկետում ստացած քաղաքացիները կարող են նոր տարկետում ստանալ միայն աշխատելու համար և օգտվել դրանից հետո զինվորական ծառայությունից ազատվելու համակարգից: Հաշվի առնելով վերոգրյալը «և» շաղկապի փոխարեն առաջարկում ենք լրացնել «համար, ինչպես նաև» բառերը: 2. հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրամշակման արդյունքում		

			նախագիծը լրացվել է նոր 1-ին հոդվածով՝ առաջարկում ենք 2-րդ հոդվածի 2-րդ նախադասությունը հանել, քանի որ այն արդեն իսկ արտացոլված է նախագծի 1-ին հոդվածում:		
4.	Կառավարություն	2-րդ (լրամշակված 3-րդ) հոդված	1. Առաջարկում ենք 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդվածի վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»: 2. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «օրենքի 1-ին հոդվածով նախատեսված իրավական ակտն» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել «օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը:	Ընդունվել է	Ընդունվել է